ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАН

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 6-7
«14» 02 2018թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2018թվականի հունվար ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր՝4 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«8» հունվարի 2018թվական թիվ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԱՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՊԱՐՈՒՍՈՒՅՑԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 111-ով և հիմք ընդունելով Աննա Կարենի Մարգարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում գործող, ազգագրական պարերի խմբակները համակարգող պարուսույց՝ Աննա Կարենի Մարգարյանի հետ, երկարաձգել՝ 2017թվականի մարտի 1-ին կնքված թիվ 01 պայմանագիրը, մինչև 2018թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ, պարի խմբակների հետ աշխատանքները շարունակելու համար:
2.Նշված աշխատանքները շարունակելու համար, երկարաձգված պայմանագիրը ներկայացնել՝ համայնքի ավագանու առաջիկա նիստի հաստատմանը:
3.Աշխատանքային պայմանները՝ ներկայացված են պայմանագրում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հունվարի 8
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«8» հունվարի 2018թվական թիվ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 85-ի հինգերորդ մասով, իրականացնելով համայնքի ղեկավարի լիազորությունները բյուջետային գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանում ստեղծել մշտական հանձնաժողովներ, տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:
2.Հանձնաժողովներում ընդգրկել՝ համայնքապետարանի աշխատակիցներ, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:
3.Հանձնաժողովների կազմերը ներկայացնել՝ համայնքի ավագանու հաստատմանը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հունվարի 8
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«8» հունվարի 2018թվական թիվ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 35-ի առաջին մասի 24-րդ կետով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում բնակիչների հաշվառում իրականացնելու նպատակով, ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնաժողովին՝ ներկայացնել հաշվետվություն Ազգային վիճակագրական վարչությանը, ստացված տվյալների հիման վրա:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հունվարի 8
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«8» հունվարի 2018թվական թիվ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ» ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄԻՑ ԱՎԵԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ԱՄՍԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 192-ի առաջին մասով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին, ինչպես նաև «Մշակույթի տան» աշխատակազմի աշխատակիցներին իրենց ցանկությամբ /դիմումի հիման վրա/ վճարել ամսեկան աշխատավարձից կանխավճար:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2018թվական հունվարի 8
գ. Մրգաստան